Թերեզա Ամրյան

Ռզգանը ֆերմեր դարձավ

Ռզգանը խիտ, փայլուն մազերով և խոշոր, ամուր մատներով տղամարդ է . քայլելիս նրա բարձր հասակը երբեմն երերում է, մեջքը ճկվում, նմանվում է ծռված որթատունկի:

Վերջերս իրականացել է Ռզգանի փայփայած երազանքը. Ռզգանը նոր գոմ է կառուցել: Գյուղում Ռզգանի բոլոր եզդի ազգակիցներն դրա մասին են խոսում:

Ոչ ոք չի էլ պատկերացնի, թե ինչքան է Ռզգանը չարչարվել դրա համար . մինչև գոմ կառուցելը նա իր քանդուքարափ ձեռագրով բազմաթիվ թվեր է գրել տասներկութերթանոց տետրի բոլոր էջերում, հետո իր վերջնական հաշվարկները մաքրագրել է տետրի կանաչ կազմին: Ռզգանն ուզում էր նոր գործի համար գումար պարտք անել կամ վարկ վերցնել, բայց դրա կարիքը չեղավ, օգնության հասավ մարզպետը . դե ո՞ր մի մարզպետը չի օգնում աշխատասեր գյուղացիներին . . . Ռզգանը նոր կառուցած գոմում տեղավորեց իր ունեցած և մարզպետի նվիրած անասունները . դարձավ ֆերմա, իսկը արտասահմանյան ֆիլմերում պատկերվող ֆերմաների նման՝ սվաղած պատերով գոմով, բծավոր կովերով . . . Ռզգանն էլ հաջողությունից ոգևորված՝ փորձեց նմանվել ֆիլմերի ֆերմերներին: Նա հաստ ներբաններով կոշիկներ հագավ, մի շաբաթ չսափրվեց և դարձավ սև, փայլուն մորուքի տեր . մորուք, որ ծածկեց Ռզգանի չեչոտ այտերը և դեմքին այլաշխարհիկ ֆերմերի տեսք հաղորդեց:

Օրը մի քանի անգամ Ռզգանը գոմ է մտնում՝ անասուններին նայելու և աշխատակիցների գործը ստուգելու համար: Մինչև նոր գոմի հայտնվելը այդ

գործերին մասնակցում էր նաև Ռզգանի կինը, իսկ երեխաներն ամբողջ օրը գործ էին անում և օգնում: Հիմա անասնապահությունն իսկական բիզնես է դարձել, ֆերմեր Ռզգանն արդեն մի քանի աշխատակից ունի:

Տնից մինչև գոմ ընկած ճանապարհը Ռզգանը քայլում է՝ հպարտ-հպարտ շուրջը նայելով, իր փոքրիկ սանրով սև, թավշյա մորուքը հարդարելով: Երբեմն նրան ուղեկցում են երեխաները նոր գոմով հիանալու համար: Ռզգանի կինն այլևս ստիպված չէ կով կթել, նա ավելի շատ ժամանակ ունի, նա կարող է տանը մնալ և ժամեր շարունակ հաճույքով դիտել Յութուբում հայտնված եզդիական հարսանիքների ձայնագրությունները:

Ռզգանի ֆերմայի նոր աշխատակիցներից մեկը համագյուղացի Թուկազն է, որ երկու աղջիկ և մի որդի ունի: Տղան բանակում է, աղջիկները դպրոցական են: Թուկազի ամուսինը տարիներ առաջ արտերկիր է գնացել ու չի վերադարձել. երևի գործերը «շատ հաջող» են ընթացել, երևի օտարազգի նոր կին է գտել: Արդեն տասներկու տարի է, որ Թուկազն իր ամուսնուն է սպասում . նա մենակ է մեծացրել իր զավակներին և մտքով չի էլ անցել ապահարզանի կամ օրենքի ուժով ամուսնուց աջակցություն ստանալ . Է՛հ, սա եզդիական գյուղ է, որտեղ շատ հարցեր լուծվում են ներքին կարգով: Թուկազի ընկերուհիները, եղբայրների կանայք մի քանի անգամ խորհուրդ են տվել կյանքի նոր ընկեր գտնել, բայց Թուկազը չի ուզում լսել դրա մասին . եթե Թուկազի երեխաների հայրն այս պահին էլ գա, Թուկազը գրկաբաց հետ կընդունի նրան:

Թուկազը գումար է վաստակում՝ գյուղում տարբեր գործեր անելով . քաղհան, հարևանների կովերը կթել, հաց թխել, համագյուղացիների համար խմոր հունցել… Օրուգիշեր աշխատում է, թվում է՝ երբեք չի հիվանդանում: Թուկազին վստահում են, ասում են՝ մաքուր ձեռք ունի: Գյուղի երիտասարդ հարսներն ու աղջիկները երբեմն Թուկազին կանչում են՝ իրենց մեծ տների բարձր առաստաղներից մինչև հատակը ձգվող վարագույրները արդուկելու: Ախր ոչ ոք Թուկազի պես վարագույր չի արդուկում: Թուկազը օրը մի անգամ նաև Ռզգանի ֆերմայում է գործ անում: Դա շատ ձեռնտու է, աշխատանքը շատ ժամանակ չի խլում, Ռզգանն էլ խոստացել է լավ վճարել:

Ժամանակ առ ժամանակ Ռզգանը կանգնում է գոմի անկյունում և նայում՝ ինչպես է Թուկազն արծաթագույն, նոր բահով մաքրում գոմաղբը: Ռզգանի հայացքը թաքուն սահում է Թուկազի ծիրանագույն գլխաշորի, մեջքը գրկող կարմիր շալի վրայով: Երբ Թուկազը վերջացնում է աշխատանքն ու պատրաստվում է դուրս գալ, Ռզգանը մոտենում և ցածրաձայն շնորհակալություն է հայտնում:

Մի անգամ Թուկազը հիշեց, թե ինչպես էին ինքն ու Ռզգանը փոքր ժամանակ խաղում. չէ՞ որ մոտ հարևաններ էին, մանկության ընկերներ: Ռզգանը հիշեց, որ իրենք նույն դասարանում էին սովորում, հիշեց՝ ինչ լավ էր սովորում Թուկազը, ոնց էր ինքը Թուկազից մաթեմատիկայի ստուգողականներն արտագրում: Թուկազը ծիծաղելով պատմեց՝ ինչպես էին ինքն ու Ռզգանը միասին դպրոցից տուն գալիս, ինչպես էր ամեն օր Ռզգանի հորեղբայր Ունոն, նրանց միասին տեսնելով, ասում .

– Ա՛յ տղա, Ռզգա՛ն, մեր հարևանի աղջիկ Թուկազին չնեղացնես հա՞, թե չէ ձեռքիցս չես պրծնի:

Ռզգանը հիշեց՝ ոնց էին բորոր ուսուցիչները գովում Թուկազին, ոնց էին ասում, որ Թուկազն անպայման պետք է համալսարան գնա: Բայց մի օր Թուկազին դպրոցից հանեցին և նշանեցին: Գյուղի դպրոցի մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչները եկան Թուկազի տուն, փորձեցին Թուկազի ծնողներին համոզել հետ կանգնելու իր որոշումից, բայց ոչինչ չկարողացան անել: Թուկազի ծնողները հայ ուսուցիչներին ասացին, որ դա եզդիական գյուղ է, որտեղ շատ հարցեր լուծվում են ներքին կարգով:

Ռզգանը մի քիչ տխուր է, բայց նաև երջանիկ է, թվում է՝ երախտապարտ է Թուկազին այդ քաղցր-տխուր հիշողությունների համար:

Թուկազի բարեհամբույր ձայնն ու կատակները համարձակություն են տվել Ռզգանին . նա ավելի հաճախ է սանրում իր սև, թավշյա մորուքը: Հետո ձեռքերը խաչում է կրծքին և չիլիական Զատկի կղզու կուռքերի քանդակների հպարտ հայացքով նայում իր նոր գոմում աշխատող Թուկազին:

– Թուկա՛զ, հիշո՞ւմ ես, որ մի անգամ դասամիջոցին մազերդ քաշեցի, մաթեմատիկայի ծանր գրքով խփեցիր գլխիս:

– Ո՞նց չեմ հիշում…

Ռզգանը ծիծաղում է, նրա սև մորուքին սանրի թողած զուգահեռ գծիկներն ավելի արտահայտիչ ու փայլուն են դառնում:

– Ռզգան՛, հիշո՞ւմ ես՝ ինչքան պարեցինք քո հարսանիքի ժամանակ. մի քանի ամիս էր մնացել, որ տղաս ծնվի, քո հարսանիքի սեղանի բոլոր նարինջները ես կերա:

Ռզգանը ժպտում է, բայց բերանը կիսաբաց է մնում. տեսնես ի՞նչն է խամրեցնում է ֆերմեր Ռզգանի հիշողությունների փայլը:

Մի անգամ, երբ Թուկազն աշխատում էր գոմում, Ռզգանը ներս մտավ, մոտեցավ նրան և առանց բարևելու ասաց.

– Հիշո՞ւմ ես՝ ոնց էի սիրահարվել, իսկ դու ինձ չուզեցիր… Հիմա մի ընտանիք կլինեինք:

– Լավ էլի, Ռզգա՛ն . . . Երկուսս էլ մեր բոյի երեխաներ ունենք, – բահով գոմաղբը մաքրելով և Ռզգանի կողմը չնայելով՝ ասաց Թուկազը:

Ռզգանը բռնեց Թուկազի թևը, Թուկազը, թափ տալով, թևն ազատեց և անսպասելի կոպտությամբ ասաց.

– Վերջացրու՛, երկու մետր բոյ ունես, բայց քարկտիկի քար ես դարձել:

Մի քանի օր Թուկազը Ռզգանին չտեսավ. գալիս, լուռ աշխատում, գնում էր: Մի անգամ էլ գործ անելիս Թուկազը լսեց գոմի դռան ճռռոցը, բայց չշրջվեց. մտածեց՝ քամին է այն տարուբերում: Հանկարծ իր ծոծրակին տաք շնչառություն զգաց, վեր թռավ, մի քայլ առաջ գնաց և արագ շրջվեց: Ռզգանն էր հպարտ կանգնել և փակել Թուկազի տեսադաշտը:

– Եթե հիմա իմը չլինես, ապա հետո կստիպեմ ինձ մոտ գալ: Ուժով լինի, խաբեությամբ թե կախարդությամբ, միևնույն է քեզ կստիպեմ իմը լինել, – ասաց Ռզգանը:

Թուկազը փորձեց անցնել Ռզգանի աջ կողքով և ազատվել նրա խեղդող ներկայությունից: Ռզգանն ամուր բռնեց Թուկազի դաստակից: Թուկազը հետ գնաց, անփույթ տրորեց թարմ, ջրալի գոմաղբը, բահն ամբողջ ուժով իջեցրեց Ռզգանի գլխին և ասաց .

– Ես քեզ խաբեություն և կախարդություն ցույց կտամ: Ի՞նձ ես ինչ-որ բան ստիպելու . . .

Ռզգանը ցնցվեց, հետ-հետ գնաց, փորձեց հենվել գոմի սվաղած պատին, բայց չկարողացավ, նրա երկար հասակը ճկվեց և չորացած ուռենու ճյուղի պես ընկավ գետնին: Թուկազը բահը նետեց գոմաղբի մեջ պառկած Ռզգանի վրա և դանդաղ քայլերով հեռացավ: Ճանապարհին Թուկազը հարևաններին հայտնեց, որ Ռզգանը գոմում ընկած է: Դե սա եզդիական գյուղ է, որտեղ շատ հարցեր լուծվում են ներքին կարգով . . .

Երբ Ռզգանի տարեց հորեղբայր Ունոն հայտնվեց Թուկազի բակում, Թուկազը նրան ընդառաջ գնաց: Ծերունին, լոք տալով և կաղալով, անցավ Թուկազի տան առջևով հոսող առվակի վրայով, մի կողմ նետեց ձեռքի փայտը, կանգնեց ծառի կողքին, կռացավ համբուրեց Թուկազի ճակատն ու ասաց.

– Եղբորս տղայի գլուխը կապեցին, արդեն արյունահոսությունը դադարել է . ես եկա՝ տեսնեմ՝ դու ոնց ես:

– Հորեղբա՛յր, ես եմ բահով խփել . . .

– Թուկա՛զ, այդ շունն ուզում էր քեզ ձեռք տալ, – շշնջաց հորեղբայր Ունոն:

– Այո՛, հորեղբա՛յր:

– Օղորմի քո հորը, Թուկա՛զ, – ծերունու խոսքերը գովեստի և օրհնանքի պես հնչեցին . ասես Թուկազը բարի գործ կամ հերոսություն էր արել:

Թուկազը ոչինչ չասաց, բայց կյանքում առաջին անգամ ուղիղ նայեց ծերունու աչքերին:

– Դու իմ աղջիկն ես, թող ոչ ոք չփորձի հանկարծ քեզ մեղադրել կամ նեղացնել. եթե էլի այդ շունը նման բան անի, ինքս նրա հախից կգամ, – ասաց հորեղբայր Ունոն և հենվեց ծառի բնին:

Այդ դեպքից հետո գյուղի կյանքում շատ բան չփոխվեց. բոլոր գոմերը, թոնիրները, տները, վարագույրները մնացին իրենց տեղերում:

Մի շաբաթ հետո մարզկենտրոնի բժիշկը նայեց Ռզգանի վերքն ու ասաց.

– Ի՞նչ է պատահել, էս ի՞նչ եք արել:

– Ընկել եմ, բժի՛շկ ջան, – պատասխանեց Ռզգանը:

– Հենց ուղղահայաց ձևով, գլխի վրա՞ ընկար, – թերահավատորեն ժպտաց բժիշկը և լռեց . բժիշկը վաղուց գիտեր, որ դա եզդիական գյուղ է . . .

– Աստիճաններից է գլորվել, – միջամտեց Ռզգանի կինը:

– Տնաշեննե՛ր, էս ո՞ր դարում ենք ապրում, որ փորձում եք կտորի մոխիրով վիրակապեր անել:

– Վախենում էինք արյունաքամ լինի, – ասաց Ռզգանի կինը:

– Բայց ձեզ ո՞վ է ասել այրած կտոր և շաքարի փոշի լցնել վերքին:

– Էդպես արեցինք, որ ինֆեկցիա չանցնի, – հպարտորեն ասաց Ռզգանի կինը, որ անկախ ամեն ինչից, փրկել էր ամուսնու կյանքը՝ օգտագործելով լուսահոգի հորեղբոր կնոջ բաղադրատոմսն ու վիրակապելու ձևը:

Թուկազը նախկինի պես գյուղում տարբեր գործեր է անում. քաղհան, հարթուկ, հաց թխել, խմոր հունցել: Գյուղի կանայք և աղջիկները աշխատանքից հետո Թուկազին խնդրում են մի քիչ երկար մնալ, սեղան նստել իրենց հետ: Թուկազը գյուղում բոլոր եզդի տղամարդկանց հերոսուհի քույրն է դարձել: Ռզգանը

նախկինի պես օրը մի քանի անգամ գոմ է գնում: Հիմա գոմում Թուկազի աշխատանքը Ռզգանն է անում . երեխաները չեն օգնում, իսկ կինն օրուգիշեր տանը նստած՝ հեռուստասերիալներ է դիտում: Ռզգանը գոմ գնալու ճանապարհին չի սանրում իր մորուքը, միայն ուղղում է ընկերոջ նվիրած «վիլվետից» գլխարկը . այդ գլխարկի տակ նա հիմա խնամքով թաքցնում է բժշկի դրած վիրակապը: Ռզգանի ճակատին և աչքերի տակ հայտնված այտուցները մատնում են առողջական վիճակը, լուսահոգի հորեղբոր կնոջ բաղադրատոմսն անօգուտ է եղել . . . Սա եզդիական գյուղ է, որտեղ շատ հարցեր լուծվում են ներքին կարգով: